



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1 (58)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**«ԳԵՂԵՑԻԿ» ԱԾԱԿԱՆԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ և ԱՐԱՔԵՐԵՆՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱՖԱՅԵԼՈՎԱ

Հիմնաբառեր՝ գեղեցիկ, հասկացույթ, աշխարհի լեզվական պատկեր, էթնոս, լեզվամշակույթ, փորձաքննություն, համեմատական կառույց

Հոդվածը նվիրված է հայ և արաբ լեզվակիրների շրջանում «գեղեցիկ» ածականի ընկալման ուսումնասիրությանը: Լինելով գեղագիտական հասկացություն՝ այն կարևոր է ցանկացած լեզվի ազգային մտածելակերպը հասկանալու համար: Ուսումնասիրությունը հիմնված է «գեղեցիկ» բառով կազմված համեմատական կառույցի զուգորդությունների վրա՝ որոնք ստացվել են հոգելեզվաբանական փորձաքննության արդյունքում: Այն անցկացվել է հայ և արաբ 100 լեզվակիրների շրջանում:

Ներկայումս ժամանակակից լեզվաբանական հետազոտություններում մեծ դեր է հատկացվում լեզվամշակութային ուսումնասիրություններին, որոնց համար հիմք է ծառայում յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանական շերտը (Маслова 2004:183): Այն թույլ է տալիս խոսել աշխարհի լեզուների ազգային պատկերի մասին, որում արտացոլվում է յուրաքանչյուր ժողովրդին բնորոշ մտածելակերպը: Դարձվածաբանական շերտի անքակտելի մաս են կազմում նաև համեմատական կառույցները, որոնք ազգային գիտակցության բացահայտման ցայտուն օրինակներ են:

Լեզուն արտացոլում է ոչ միայն մարդու շրջակա աշխարհը, այլև մտածելակերպը, մշակույթը՝ փոխանցելով այն սերնդեսերունդ: Մարդու անհատականության, ազգային բնավորության և էթնիկ գիտակցության ստեղծման գործընթացում լեզվի դերը շատ կարևոր է: Այն արտացոլում է իր ազգին բնորոշ մշակութային իրողությունները և դրա հետ մեկտեղ ծառայում է իր մշակույթին (Маслова 2004:158): Այդպիսի իրոյթները ստեղծում են ազգային հասկացույթներ: Յուրաքանչյուր ազգային լեզու հարուստ է միայն իրեն բնորոշ հաստատուններով, որոնք էլ տարբերակում են ազգային մշակույթներն ու լեզուները (Манакин 2004: 24): Օրինակ, հայ հասկացութային տիրույթում կարևոր է համարվում

Մայր Հայաստանի կերպարը, իսկ որպես խորհրդանիշ ծառայում են հետևյալ հասկացությունները՝ *Արարատ, նուռ, խաղող* և այլն: Արաբական ազգային հասկացություններ են համարվում *անապատը, Մեքքան, արմավը, օազիսը* և այլն: Ազգային կարևորագույն գաղափարները ծագում են ապրելակերպի, պատմության, սովորությունների, բնակլիմայական պայմանների և շատ ուրիշ գործոնների ազդեցության արդյունքում: Հետևաբար, աշխարհի լեզվական պատկերի կառուցվածքային առանձնահատկությունները պայմանավորված են այդ բոլոր հանգամանքներով: Հայ լեզվական մշակույթում գեղեցիկ, երիտասարդ կնոջ կերպարը զուգորդվում է *լուսնի (աղջիկն՝ անուշ մի լուսին / Հ. Թումանյան)*, իսկ տղայինը՝ *կրակի* հետ (*կրակի կտոր*): Արաբների մոտ աղջկա կերպարը զուգորդվում է *լուսնի* կամ *լիալուսնի, մարգարտի* հետ և այլն:

Ժամանակակից գիտական գրականության մեջ «գեղեցիկին» նվիրված բազմաթիվ աշխատանքներ կան (Богуславский 1995, Арутюнова 2004): Գեղեցիկը բնորոշում է մարդու վարքագիծը, նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի և այլ մարդկանց հանդեպ: Հետևաբար, այն համարվում է մարդկային ամենաբարդ երևույթներից մեկը, որն արտահայտվում է մեզանից յուրաքանչյուրի արտաքինում, խոսքում և գործողություններում:

Այս աշխատանքի նպատակն է բնութագրել արաբերենում և հայերենում «գեղեցիկի» ընկալումը և ուսումնասիրել հնարավոր զուգորդումները տարբեր իրողությունների հետ: Ուսումնասիրության առարկան երկու լեզուներում «գեղեցիկ» ածականով գործածվող համեմատական կառույցներն են, որոնք բացահայտվել են հոգելեզվաբանական հարցման արդյունքում:

Բոլոր ժամանակներում գիտնականները փորձել և փորձում են ուսումնասիրել և տալ գեղեցիկի ճշգրիտ սահմանումը:

Գեղեցիկը ընդհանուր գեղագիտական երևույթ է, որը նշանակում է ներդաշնակ համադրություն, կատարելություն, որը գեղագիտական հաճույք է պատճառում դիտողին: Այն ընդհանուր, բազմակողմանի ու հավերժական հասկացություն է:

Ելնելով այն հանգամանքից, որ սույն աշխատանքում «գեղեցիկ» հասկացությամբ առանցքային է, ապա կարևոր է առաջին հերթին պարզել արաբական և հայկական ժամանակակից բառարաններում «գեղեցիկ» բառի իմաստը:

Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» «գեղեցիկ»-ը սահմանվում է որպես ածական՝ *լրեսքով դուրեկան, գույների, գծագրության մասերի ներդաշնակությամբ օժտված*, որպես

աղջիկ՝ գրավիչ դիմագծերով, շարժումների ներդաշնակություն և այլն (Աղայան 1976): Ս. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում»՝ Աջքի համար դուրեկան, ախորժելի՝ ձևով, գույնով, մասերի ներդաշնակությամբ և այլն (Մալխասեանց 1945):

Զուգադրական վերլուծության համար մենք անդրադարձել ենք նաև արաբերենի բառարաններում, մասնավորապես ալ Մուաջամ ալ Ուասիտում (المعجم الوسيط) այս բառի սահմանմանը: Նշված բառարանում այժմեական են հետևյալ նշանակությունները՝ *աչքերին, ականջներին զգայարաններին, հոգուն հաճույք պատճառող հատկանիշ, գերազանց նուրբ որակ, գեղեցիկ բարքեր, արտաքին և այլն* (Al Muajjam al Waseet):

Երկու լեզուներն էլ հարուստ են մի շարք հոմանիշներով, որոնք բնութագրում են այս գեղագիտական հասկացությունը: Ա. Մ. Սուբխայանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» մենք գտնում ենք այնպիսի հոմանիշներ, ինչպիսիք են *սիրուն, գեղանի, չքնաղ, չնաշխարհիկ, բարեգեղ, (բրբ).՝ խորոտ, թառլան, շարմաղ, նախշուն, խափուփիկ, (արևմտի.) աղվոր* և այլն (Սուբխայան 1967):

Արաբերենում ալ Մասնի բառարանը առաջարկում է հոմանիշների հետևյալ շարքը՝ *جَدَاب (առինքնող), ساجر (կախարդական), فَاتِن (գայթակղիչ), حلو (քաղցրիկ), مُتَع (հետաքրքիր), وسيم (անուշ), آسیر (գրավիչ), أَغْر (արժանի), باهر (փայլուն), حَسَن (լավ), زَانِع (հրաշալի)* և այլն (Al Maani):

Ինչպես արդեն նշվել է, այս ուսումնասիրությունը կատարվել է հոգելեզվաբանական հարցման արդյունքների հիման վրա: Հարցումն անցկացվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության և Կահիրեի համալսարանի արաբերենի և մանկավարժության ֆակուլտետներում: Հարցմանը մասնակցել են յուրաքանչյուր լեզվակիր խմբից չորրորդ կուրսի 100 ուսանող: Փորձաքննվողներին բաժանվել են «գեղեցիկ» խթանիչ բառով հարցաթերթիկներ: Նրանք պետք է գրեին իրենց մտքին եկած առաջին զուգորդումները՝ գեղեցիկ մարդու արտաքինը նկարագրելու համար: Փորձաքննության արդյունքում ստացվել է 320 պատասխան հայերենով և 315՝ արաբերենով: Ամբողջությամբ վերլուծվել է 635 պատասխան:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երկու խմբերի լեզվակիրների մոտ գեղեցիկ մարդը համեմատվում է 10 իրողությունների հետ: Դրանք են՝ բուսանուններ, կենդանանուններ, ձեռակերտ իրեր (արտեֆակտներ՝ ըստ Արիստոտելի), բնական նյութեր և քարեր, բնության օբյեկտներ, մարդիկ, ազգություն, վերացական հասկացություններ, տարվա եղանակներ և օրվա պահեր,

բանահյուսություն, դիցաբանություն և գրական կերպարներ: Դիտարկենք դրանք առանձին:

Հայ լեզվակիրների մոտ վերոնշյալ իրողություններից ամենահաճախ հանդիպում են բուսանուններով զուգորդումները: Դրանք կազմում են հետազոտված նյութի 40%-ը: Հայերը գեղեցիկ մարդուն համեմատում են *բարդու* կամ *չինարի* հետ: Այս երկու բուսանունները բազմիցս հանդիպում են հայ ժողովրդական երգերում:

Հայ լեզվակիրների բերած օրինակներում գեղեցիկ աչքերի նկարագրման համար հանդիպում են հետևյալ զուգորդումները, օրինակ՝ *գեղեցիկ, ինչպես սև խաղողը, զեյթունը* և այլն: Արաբախոսները գեղեցիկ արտաքինը համեմատում են *եգիպտական ուռենու* հետ:

Արաբ լեզվակիրների կողմից ամենահաճախ գործածվող օրինակները զուգորդվում են բնության օբյեկտների, օրինակ՝ լուսնի հետ */գեղեցիկ, ինչպես լուսինը/*: Նրանք կազմում են հետազոտված նյութի 60% -ը, իսկ հայ լեզվակիրների մոտ՝ *արևի և լուսնի* հետ համեմատությունները կազմում են ուսումնասիրված նյութի 15-ական %-ը: Այս տարբերությունը պարզ երևում է երկու ազգերի կողմից գործածված համեմատական միավորների տոկոսային տարբերության մեջ: Իհարկե, չոր և շոգ կլիմայական պայմանները ստիպում են արաբ ժողովրդին հատուկ, նուրբ վերաբերմունք տածել գիշերային գեղեցկուհու՝ լուսնի նկատմամբ:

Տարբեր մշակույթներում իմաստով իրար մոտ հասկացույթները ամբողջովին չեն համընկնում իրենց ներքին բովանդակությամբ, բայց այդ նրբերանգներում վառ դրսևորվում է ազգային ինքնությունը, ինչն էլ ցույց է տալիս տվյալ ազգի աշխարհի լեզվական պատկերի առանձնահատկությունները:

Այս տարբերությունը հստակորեն մատնանշում է ուզբեկ գրող Ս. Պուլատովը: Նա նկատում է, որ «արևը ռուսերենում ամենևին այն չէ, ինչ *կուեշը* ուզբեկերենում, և, իհարկե, ոչ էլ այն, ինչ *օֆթաբը* տաջիկերենում: Ի վերջո, ուզբեկը, որը տարվա մեծ մասն ապրում է արևի կիզիչ ճառագայթների ներքո, երբեք չի ասի փաղաքշական «солнышко» բառը, ինչպես ռուսը, որը չունի այն զգացումը, որ արևը կարող է ոչ միայն բարեբեր լինել և ջերմացնել երկիրը, այլև լինել մարդու թշնամին: Բայց ուզբեկը բոլորովին այլ վերաբերմունք ունի լուսնի, այդ գիշերային լուսատուի նկատմամբ, որը զովություն և խաղաղություն է բերում: Նա իրեն ցանկալի և տեսքով գեղեցիկ մարդկանց կոչում է «լուսնյակ», «լուսնի նման» և այնպիսի առոգանությամբ, որ ռուսի ականջին այն կարող է թվալ, առնվազն, շինծու» (Пулатов 1987: 109):

Ինչպես տեսնում ենք, *արևը* և *լուսինը*, լինելով համընդհանուր հասկացույթներ, ունեն տարբեր արժեքային ենթատեքստեր, որոնցով էլ

պայմանավորված են յուրաքանչյուր ազգին բնորոշ ընկալումները, որոնք համեմատության ժամանակ տարբեր դրսևորումներ են ստանում:

Նույնը նկատում ենք նաև հայ և արաբական մշակույթների զուգադրական վերլուծության ընթացքում: Քնքշություն ցուցաբերելու համար արաբներն ասում են՝ *լուսինս*, իսկ հայերը՝ *արևս*:

Բացի վերոնշյալ օրինակներից, երկու մշակույթների ներկայացուցիչների պատասխաններում դիտարկվում են հետևյալ պատասխանները՝ *աստղերի, լուսնի լույսի, գարնանային երկնքի պես գեղեցիկ* և այլն:

Նույն պատկերը կարելի է տեսնել նաև այն համեմատական կառուցներում, որտեղ որպես կերպար-չափանիշ հանդես են գալիս կենդանունները: Հայ լեզվակիրները ավելի հաճախ համեմատում են գեղեցիկ մարդուն *եղնիկի* հետ: Այդպիսի պատասխանները կազմում են մոտ 15 %, իսկ արաբներենում՝ *վիթի* հետ, որոնք նույնպես կազմում են 15 %: Արաբ լեզվակիրների մոտ արձանագրվել են զուգորդումներ *ուղտի* հետ: Այդպիսի օրինակներ կարելի է գտնել անապատային ազգերի մոտ, որտեղ վերոնշյալ կենդանին իրենց կենցաղի անբաժանելի մասն է:

Բնական նյութերի և թանկարժեք քարերի հետ զուգորդումները կազմում են համեմատաբար փոքր տոկոս: Երկու ազգային մշակույթների ներկայացուցիչները գեղեցիկ կնոջը համեմատում են *ուկու* հետ: *Բյուրեղի* և *մարգարտի* հետ զուգորդումները հատուկ են արաբ ժողովրդին: Պետք է նշել, որ երկար ժամանակ Արաբական Արևելքի հարավը հայտնի էր մարգարտների արդյունահանմամբ:

Արաբական և հայ մշակույթների համար ընդհանուր կարելի է համարել զուգորդումները հետևյալ ձեռակերտ իրերի հետ՝ *գեղեցիկ, ինչպես նկարած, նկար* և այլն: Հայերի մոտ հանդիպում են նաև հետևյալ արտահայտությունները՝ *գեղեցիկ ինչպես նախշավոր, չալպուրիկի, չալտիկ, կտոր*:

Այն օրինակներում, որտեղ զուգորդումներ են անցկացվել ազգային պատկանելություն ցույց տվող բառերի հետ, արձանագրվել են միայն երկու ազգերին բնորոշ միավորներ: Հայերը գեղեցիկ մարդկանց համեմատում են իրենց ազգի հետ՝ *հայուհու պես գեղեցիկ*, իսկ արաբները՝ օտարերկրացիների, օրինակ՝ *جميلة مثل الأجانب* (*արտասահմանցու պես գեղեցիկ*):

Երկու մշակույթների ներկայացուցիչների մոտ մարդկային գեղեցկությունը զուգորդվում է մարդկանց որոշակի խմբերի հետ՝ ավելի հաճախ *մոր, սիրելիի, երիտասարդ աղջկա* և այլն:

Բերված խմբերից ամենացայտունը կարելի է համարել բանահյուսությանը և դիցաբանությանը, գրական կերպարների

վերաբերող հատվածը: Հարցմանը մասնակցած երկու խմբերի համար շատ զուգորդումներ ընդհանուր են: Օրինակ՝ *Կլեոպատրայի, հրեշտակի, Ջոկոնդայի, Անջելինա Ջոլի, Ամուրի, Մոնա Լիզայի, Ռաֆայելի Մադոննայի նման գեղեցիկ* և այլն:

Հայ լեզվակիրները գեղեցիկ մարդուն համեմատում են *Արա Գեղեցիկի, Հուրի Փերիի և Դունյա Գյոզայի* կերպարների հետ: Վերջին օրինակները շատ հաճախ հանդիպում են հայ ժողովրդական հեքիաթներում:

Արաբ լեզվակիրներին բնորոշ են այսպիսի զուգորդումները՝ *Ալլահի (الله), հրեշտակի (ملاك)* պես գեղեցիկ:

Տարվա եղանակների և օրվա պահերի հետ զուգորդումների օրինակներում երկու լեզվամշակույթների ներկայացուցիչները բերում են այնպիսի համեմատություններ, ինչպիսիք են՝ *գիշերվա, գարնանային օրվա, գարնան պես գեղեցիկ*: Իրենց լեզվական մշակույթին բնորոշ օրինակներ են բերում միայն արաբ լեզվակիրները: Օրինակ, *العيون جميلة مثل الفجر* (աչքերը գեղեցիկ են, ինչպես լուսաբացը):

Վերացական հասկացություններով համեմատություններ կազմավորվել են միայն արաբ լեզվակիրների շրջանում: Նրանք գեղեցիկը համեմատում են սիրո հետ: *جميلة مثل الحب* (սիրո պես գեղեցիկ):

Համեմատական կառույցների հասկացութաբանաստային բովանդակության տեսանկյունից արաբ լեզվակիրների մոտ պատասխաններն ավելի բազմազան են, մինչդեռ հայ լեզվակիրների կողմից բերված օրինակներում գերակշռում են կարծրատիպային կերպար-չափանիշները: Դրանք այն համեմատություններն են, որոնք համընկնում են լեզվում գոյություն ունեցող դարձվածային միավորների հետ:

Հետաքրքրական է, որ հարցմանը մասնակցած բոլոր խմբերը, զուգահրդական ավանդական միավորների հետ միասին, առաջարկում էին ժամանակակից և անսպասելի զուգորդումների բազմաթիվ օրինակներ, որոնք արտացոլում են ուսանողների տարիքային հետաքրքրությունները (գեղեցիկ, ինչպես Նաոմի Քեմփբելը, Բրիթնի Սփիրսը, Քարոլայանը): Հայ լեզվակիրների մոտ հանդիպում են զուգորդումներ *Լուսինե Թովմասյանի հետ: Իսկ արաբ լեզվակիրները բերում են այսպիսի օրինակներ՝ Ամինա Շալբայի, Հուլմ Ումրիի պես գեղեցիկ*: Վերջին երկու կերպարները արաբական կինեմատոգրաֆի և կապույտ էկրանի աստղերն են:

Հանդիպում են ինքնատիպ համեմատական կառույցների և փոխաբերությունների այլ օրինակներ ևս, ինչպիսիք են՝ *մարալ, լույսի կտոր, կծած խնձոր, պատկեր, կուկլա, Աստծու պատկեր, արևի կտոր* հայ

լեզվակիրների կողմից բերված օրինակներում, և *أبهي من القمرين، أحلى من القمر* (լուսինների պես գեղեցիկ, լուսնից էլ գեղեցիկ, քաղցրիկ ինչպես մեղրը)՝ արաբական լեզվամշակույթի ներկայացուցիչների մոտ:

Կառուցվածքային առումով ձևավորված համեմատություն-զուգորդումները հիմնականում պարզ են, սակայն հանդիպում են նաև բարդ օրինակներ, որոնք գերակշռում են հայկական լսարանի պատասխաններում, օրինակ՝ *գեղեցիկ, ինչպես լուսնի լույսը, գարնանային երկինքը, նախշավոր կտորը* և այլն:

Փորձաքննությունը ցույց է տալիս, որ խոսքային մակարդակում ակտիվորեն վերարտադրվում են ոչ միայն կայուն կամ ընդունված, այլև դիպվածային համեմատությունները, որոնք պարունակում են ոչ կարծրատիպային պատկեր-չափանիշներ:

Այսպիսով, հոդվածում բերվում են արաբական և հայ մշակույթներում *գեղեցիկը* բնութագրող համեմատական կառույցների տարբերությունների և նմանությունների առավել ցայտուն օրինակներ՝ մասամբ նշելով դրանց հնարավոր պատճառները: Ինչպես տեսնում ենք, երկու լեզուներում էլ, այդ համեմատությունները շատ վառ են, շատ ընկալումներ նման են, բայց դրանց դրսևորման եղանակները բազմազան են, ինչը կարելի է բացատրել է այդ երկու ժողովուրդների աշխարհայացքների տարբերություններով և ազգային հատկանիշներով:

Սա ապացուցում է, որ գեղեցիկի ընկալումը և գեղագիտական պատկերացումները ընդհանուր առմամբ աշխարհի արժեհամակարգի յուրացման յուրահատուկ ձև են, որի վրա մեծ ազդեցություն են թողնում ժողովուրդների բնաշխարհի առանձնահատկությունները, մշակույթն ու աշխարհընկալումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976: Aghayan E., Ardi hayereni bacatrakan bar'aran «Hayastan» Hratarakchowt'yown, Erewan, 1976:
2. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1945: Malxaseanc S., Hayere'n bacatrakan bar'aran, Haykakan SSR' Petakan Hratarakchowt'iwn, Erewan, 1945:
3. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան,

- 1967: Sowqiasyan A., Hayoc lezvi homanishneri bar'aran, Haykakan SSH Gitowt'yownneri Akademiayi Hratarakchowt'yown, Erewan, 1967:
4. Богуславский В. М. Типология значений образных средств и выражения оценки внешности человека: Автореф. дисс. докт. филол. наук. - М., 1995. Boguslavskij V. M. Tipologija znachenij obraznyh sredstv i vyrazhenija ocenki vneshnosti cheloveka: Avtoref. diss.... dokt. filol. nauk. - M., 1995.
 5. Логический анализ языка. Языки эстетики: Концептуальные поля прекрасного и безобразного / Отв. ред. Н. Д. Арутюнова. - М., 2004. Logicheskij analiz jazyka. Jazyki jestetiki: Konceptual'nye polja prekrasnogo i bezobraznogo / Otv. red. N. D. Arutjunova. - M., 2004.
 6. Манакин В. Н. Сопоставительная лексикология / В. Н. Манакин. - К. : Знания, 2004. - 326 с. Manakin V. N. Sopostavitel'naja leksikologija / V. N. Manakin. - K. : Znannja, 2004. - 326 с.
 7. Маслова В. А. Лингвокультурология / В. А. Маслова. - М. : ACADEMIA, 2004. - 202 с. Maslova V. A. Lingvokul'turologija / V. A. Maslova. - M. : ACADEMIA, 2004. - 202 с.
 8. Маслова В. А. НОМО LINGUALIS в культуре : монография / В. А. Маслова. - Витебск : Изд-во УО "ВГУ им. П.М. Машерова", 2004. - 214 с. Maslova V. A. НОМО LINGUALIS v kul'ture : monografija / V. A. Maslova. - Vitebek : Izd-vo UO "VGU im. P.M. Masherova", 2004. - 214 s.
 9. Пулатов В. Восхождение / В. Пулатов. - М., 1987. Pulatov V. Voshozhdenie / V. Pulatov. - M., 1987.
 10. المعجم الوسيط, <https://www.d1.islamhouse.com> Al Muajam al Waseet.
 11. المعنى, <https://www.almaany.com/ar/dict/ar-ar> Al Maani.

КРИСТИНЕ СЛАВИКОВНА РАФАЕЛОВА - ЛИНГВОКУЛЬТУРНОЕ СОПОСТАВЛЕНИЕ ПРИЛАГАТЕЛЬНОГО «КРАСИВЫЙ» В АРМЯНСКОМ И АРАБСКОМ ЯЗЫКАХ

Ключевые слова - красивый, концепт, языковая картина мира, этнос, языковая культура, эксперимент, сравнительная конструкция

Настоящая статья посвящена рассмотрению прилагательного «красивый» с точки зрения продуктивной речевой деятельности носителей армянского и арабского языков. Являясь общеэстетическим понятием, оно занимает важное место для понимания национального менталитета носителя любого языка. В исследовании были использованы

сравнительные конструкции со словом-стимулом «красивый», полученные в ходе психолингвистического эксперимента.

KRISTINE RAFAYELOVA - LINGUO-CULTURAL PECULIARITIES OF “BEAUTY” IN ARMENIAN AND ARABIC

Keywords - *beautiful, concept, linguistic world picture, ethnos, linguistic culture, experiment, comparative pattern*

The paper aims to study the adjective “beautiful” from the perspective of productive activity of Armenian and Arabic speakers. Beauty as a universal aesthetic notion plays an important role in understanding the national mentality as reflected in the language. The research is based on the results of a psycholinguistic experiment with the stimulus word “beautiful” in the comparative pattern “beautiful as”. The experiment was conducted among 100 speakers of Armenian and Arabic.

Ներկայացվել է՝ 17.09.2021
Գրախոսվել է՝ 15.09.2021